

# ՍԸԼԵՅՄԱՆ. «ԱՆՅՐԱԺԵՇՏ Ե ԼԱԿԱԳԱՅԻՆ ՄԻՋԱՄՏԵԼՈՒ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱԼ»

Հանրապետության նախագահ Միշել Սըլեյման հաստատեց, թե «Թաեֆի համաձայնության ոգին չէ յիշած եռակողմանիության կետը և թե Թաեֆի մասին որեւէ խօսք չի մեկնարկեր այդ համաձայնության ոգիի բարեփոխումը, այլ անոր գործարարական միջոցառումները»: Ան ուշադրության չյանձնեց, թե «ոնեւ մեկը չի խօսիր Տոհայի համաձայնությունը պահելու մասին, այլ՝ անոր ոգին պահպանելու մասին»: Սըլեյման պարզեց, թե «նախագահը կարիքը չունի խորհրդարանական պլոքի մը, որովհետեւ ան հասած է նախագահության պաշտօնին»:

Մամլոյ հարցազրույցի մը ընթացքին խօսող նախագահ Սըլեյման պարզեց, թե «որպէսզի նախագահը պահպանէ սահմանադրութիւնը, հարկ է որ անոր լիազօրութիւններ տրուին գործարարելու իր պատասխանատուութիւնը եւ, հետեւաբար, միջամտելու կարելիութիւնն ու կարողութիւնը ունենալ օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւններուն միջեւ տարակարծութեան պարզացման»: Ան երկրին վիճակը «հանգստացնող» որակեց եւ ընդգծեց սահմանադրական խորհուրդին անդամները ընտրութիւններէն առաջ նշանակելու անհրաժեշտութիւնը, կառավարության անդամներուն երկու-երրորդ մեծամասնության արժանացողները նշանակելու ընդմէջէն:

## ՆԱԽԱԳԱՀ ՍԸԼԵՅՄԱՆ ԿԸ ԽՕՄԻ ԼԻԲԱՆԱՆ-ՍՈՒՐԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Լիբանանեան «Հաուատաե» շաբաթաթերթին շնորհուած հարցազրույցի մը ընթացքին, հանրապետության նախագահ Միշել Սըլեյման հաստատեց, թե «Սուրիան պիտի չվարանի մեզի յանձնելու ոճրագործները, մեր պահանջին հիման վրայ, եթէ անոնք պահանջուած են Ռիաքի ոճիրին հարցով»: Ան ընդգծեց, թե «Սուրիոյ հետ մեր յարաբերութիւնները զօրաւոր են ու արմատացած, եւ անոնք կրնան իրենց առանձնայատկութեամբ գերազանցել դիւանագիտական յարաբերութիւնները»: Սըլեյման հարց տուաւ. «Ինչո՞ւ միշտ պետք է կապուիք Դամասկոսի բանակցութեամբ: Արդարեւ, Դամասկոսի կատարած բանակցութիւնը կ'օգնէ Լիբանանին, եւ Լիբանանի բանակցիւնը կ'օգնէ Դամասկոսին: Ո՞վ ասոր հակառակը ըսաւ»:

Ինչ կը վերաբերի սուրիական բանտերուն մէջ արգելափակելու թղթածրարին, հանրապետության նախագահը դիտել տուաւ, թե այդ թղթածրարին տարիքը անելի քան 20 տարի է «եւ կարելի չէ զայն լուծել քանի մը ամիսներու ընթացքին»: Մենք անոր պիտի հետեւեինք գիտնալու համար անոնց ճակատագիրը, ամէն անգամ որ մեզի տեղեկութիւններ գոյանան անոնց մասին: Յանձնախումբը Լիբանանի եւ Սուրիոյ մէջ կը քննարկէ այս դժուարին ու բարդ նիւթին վերաբերող որեւէ տրուութիւն», ըսաւ նախագահ Սըլեյման:

## ՆԵՃԱՆՎՈՒՄՆԵՐՈՒ ԿԱՅՔԸ ՉԱՐԺԱՆԱՅԱՎ ԵՐԿՈՒ-ԵՐՐՈՐԳ. ՄԵԾԱՐԱՄՆՈՒԹԵԱՆ

Նախարարաց խորհուրդը իր վերջին նիստին ընթացքին քուէարկութիւն կատարեց ներքին գործոց նախարար Չիատ Պարուտի առաջարկած վարչական նշանակումներու կետին շուրջ, որ սակայն չորդեգրուեցաւ նկատի առնելով, որ չարժանացաւ ներկայ նախարարներու ձայներուն երկու-երրորդի մեծամասնութեան: Քուէարկութեան արդիւնքը հետեւեալ ձեւով էր. Նիքոլա Հապր, Պեյրութի նահանգապետի պաշտօնին համար՝ 16 ձայն: Օմար Եսաֆ, Լեռնալիբանանի նահանգապետի պաշտօնին համար՝ 15 ձայն: Հիւսէյն Լաքքիս, ներքին գործոց նախարարութեան ընդհանուր տնօրէնի պաշտօնին համար՝ միայն 4 ձայն:

Պետական նախարար Ժան Օղասապեան, նիստէն ետք մեկնած պահուն թուեց քուէարկութեան արդիւնքները նշելով, թե՛ «Լաքքիս ստացաւ վարչապետ Ֆուատ Սինիորային եւ հանրապետության նախագահին երէք նախարարներուն ձայները»: Օղասապեան դիտել տուաւ, թե «ընդդիմութեան նախարարները հրաժարեցան քուէարկել համախոհութեան չգոյութեան պատճառով: Եւ տրուած ըլլալով, որ թեկնածուները կը կարօտին 20 ձայներու, այսինքն նախարարաց խորհուրդի անդամներուն երկու-երրորդ տոկոսը, ապա չվաւերացուեցաւ այս յօդուածը»:

## ԱՊԱՀՆՎՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՐԸ ԻՍՐԱԵԼԻ ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑՈՂ ՆՈՐ ՑԱՆՑԵՐ ԿԸ ՔՕՂԱԶԵՐԾԵՆ

Հաղորդուած տեղեկութիւններուն համաձայն, լիբանանեան ապահովութեան ուժերը ձեռքարկած են Իսրայէլի հաշույն լրտեսող նոր ցանցի մը անդամները, որուն մաս կը կազմեն Զ. Իպրահիմը եւ վերջինիս հայրը՝ Ռ. Իպրահիմը, որոնք Սայտայի գաւառին մաս կազմող Հասսանիէ գիւղէն են:

Իրենց հասած տեղեկութիւններուն հիման վրայ, ապահովութեան ուժերը խուզարկումի եւ հետապնդումի դիմած են Այն Ըպըլ գիւղին մէջ, ուր կը բնակին զոյգ անձերը, սակայն հոն չեն գտած զանոնք, սակայն, անելի ուշ, Պեյրութի մէջ ձեռքարկած են Զ. Իպրահիմը, մինչ անոր հայրը գտնելու փնտռուքները կը շարունակուին:

Անելի ուշ, լիբանանեան բանակի գաղտնի սպասարկութեանց տարրերը կարողացան կալանաւորել Իսրայէլի հետ գործակցելու կասկածանքին տակ գտնուող լիբանանցի մը, Ալմա Շասապ գիւղէն:

Նշենք, որ վերջին շաբաթներուն, Իսրայէլի հաշույն լրտեսող կամ անոր հետ գործակցող մէկէ անելի ցանցեր կամ անձեր քողագրծուեցան ապահովական ուժերուն կողմէ:

## ԱՅՍՕՐ՝ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՉ

15 ՄԱՅԻՍ

- \* 1618՝ Եոհան Գեթիլը կը յայտնաբերէ յարաբերական տատանումներու օրէնքը:
- \* 1859՝ ծնաւ ֆրանսացի բժիշկ Փիեռ Բիւրիան:
- \* 1905՝ Նեպտունայի մէջ հիմնուեցաւ Լաս Վեկապը:
- \* 1928՝ Միքի Մաուզ պատկերասփիռէն ունեցաւ իր առաջին ելույթը:
- \* 1955՝ համայնավար պետութիւնները կը ստորագրեն Վարշավայի Ուլտը:



## ԱՐՏ ՇԱՐԵՑԱՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԸ

Լիբանանի ֆուտբոլի բաժակը արարտեցաւ Ահոյ յաղթանակով: Արդարեւ, Ահո՝ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Շեպպա Սահէլը (կիսախաղ՝ 1-0):

Միւս կողմէ, Նըժմէ ակումբին մարզիկները եւ տնօրէնութիւնը այցելեցին Ղըրէթիմ եւ Մուսաբապալ Հոսանքի նախագահ Սաատ Հարիրիին նուիրեցին այսօրեան տիտղոսի բաժակը:

## ԵՈՒՆԱՅԹՈՒՆ ՄՕՏԵՑԱՒ ՏԻԳՂՈՍԻՆ

Անգլիոյ ֆուտբոլի այսօրեան տիտղոս գծով յետաձգուած մրցումի մը ընթացքին Մանչեսթըր Եունայթըտ կարելո՞ր՝ 2-1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց Ուիլքընի դէմ եւ քայլ մը եւս մօտեցաւ այսօրեան տիտղոսը շահելու իր արշաւին: Ա. կիսախաղը՝ 1-0 Ուիլքընի ի նպաստ արարտելէ ետք, Եունայթըտ Բ. կիսախաղի 16-րդ եւ 41-րդ վայրկեաններուն Թեյլթի եւ Քեռիքի շնորհիւ ապահովեց իր հետապնդած յաղթանակը եւ երէք կարելոյ կետերը: Այժմ Շաբաթ օր, Արսենալի դէմ կատարելիք մրցումին, կետ մը բաւարար է, որպէսզի Մանչեսթըր Եունայթըտ իր պատմութեան մէջ 18-րդ անգամ ըլլալով դառնայ Անգլիոյ ֆուտբոլի այսօրեան տիտղոսակիրը:

## Մարզական Կարճ Լուրեր

\* Մանչեսթըր Եունայթըտ եւ Լիվըրպոլ կը մրցին յառաջիկայ մարզական տարեշրջանին համար իրենց կազմին մէջ ունենալու Ուիլքընի Էջուատորի միջնապահ Արսենիո Վալենսիան: Ուիլքընի մարզիչը՝ Սթիվ Պրուս, համոզուած է, որ իր 23-ամեայ աստղը պիտի մեկնի, սակայն անոր համար ալ յստակ չէ տակաւին Վալենսիայի ընտրելիք ուղղութիւնը:

\* Մանչեսթըր Սիթի կը հետապնդէ Ռեալ Մատրիտի սպանացի յառաջապահ Ռաուլը: Սիթի, միաժամանակ կը հետապնդէ Մանչեսթըր Եունայթըտի արժանիքն յառաջապահ Գարլոս Թեյլթը:

\* Արսենալ դարձեալ հետաքրքրուած է Լիվըրպոլի սպանացի միջնապահ Չապի Ալոնզոյով: Արսենալի պատասխանատուները պատրաստ են 18 միլիոն սթերլինի գումար մը վճարել սպանացիին ստորագրութեան համար: Սակայն, Ալոնզոյի մօտիկ աղբիւրներ կ'ըսեն, թե սպանացի ֆուտբոլիստը դժուար թէ լքէ Էնֆիլտ Ռոտի ակումբը:

\* Գերմանիոյ, Ֆրանսայի եւ Սլովակիոյ մէջ, երկուքական խումբեր, հաւասար կետերով, համապատասխանաբար կը գլխաւորեն այսօրեան տիտղոսը ընդհանուր դասաւորումը: Արդարեւ, Գերմանիոյ մէջ, Վոլսպուրկ եւ Պայերն Միւնխի, հաւասար՝ 63 կետով կը գրաւեն դասաւորման Ա. եւ Բ. դիրքերը: Ֆրանսայի մէջ, Մարսել եւ Պրոսո՝ 71-ական կետերով, իսկ Սլովակիոյ մէջ Սելեթիք եւ Ռեյնլանդ 80-ական կետով կը գլխաւորեն այսօրեան տիտղոսը դասաւորումը:

**LOTO LIBANANIS** **ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԼՈՒՅՕ**

674-րդ գլխակազմութեան շահող թիւերը 14 Մայիս 2009

11 20 28 36 41 42 21

Կարգ	Բաշխում	Մրցանակներու Ընդհ. Գումար	Շահող Անհատներ	Շահած պարգէներ
1	Գլխաւոր պարգէն՝ 6 թիւ	--	--	--
2	5 թիւեր ատանել լրացուցիչ թիւ	--	--	--
3	5 թիւեր	45.822.443	16	2.863.903
4	4 թիւեր	45.822.443	854	53.656
5	3 թիւեր	91.686.000	15.281	6.000

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՅԱՆՈՒԹԻՒՆ

14 ՄԱՅԻՍ 2009		39884	1.000.000 Լ.Ո.
8	5.000 Լ.Ո.	15547	1.000.000 Լ.Ո.
43	10.000 Լ.Ո.	07033	1.000.000 Լ.Ո.
626	20.000 Լ.Ո.	11552	2.000.000 Լ.Ո.
1503	40.000 Լ.Ո.	44824	2.000.000 Լ.Ո.
2855	40.000 Լ.Ո.	08414	4.000.000 Լ.Ո.
7862	100.000 Լ.Ո.	17740	4.000.000 Լ.Ո.
7293	100.000 Լ.Ո.	03000	8.000.000 Լ.Ո.
9544	200.000 Լ.Ո.	A 35518	12.000.000 Լ.Ո.
7649	300.000 Լ.Ո.	B 35518	120.000.000 Լ.Ո.

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐԶ

\* Բոլոր անոնք, որոնք 23-26 Ապրիլին Տեր Չօր ուխտագնացութեան մասնակցեցան, կրնան մասնակցիլ, Կիրակի, 31 Մայիսի միօրեայ ուխտագնացութիւն-շրջապտոյտին Մէյտաւայ, Մաալուլա-Դամասկոս, Պլուտանի մէջ ճաշ խրախճանքով, փոխան \$45 միայն՝ \$20 վճարելով:

Շատ սահմանափակ տեղեր: Հեռ. 01-240654, 01-261177, 03-233978, 70-381408

\* Մի մոռնաք 27 Յունիսէն 5 Յուլիս, դէպի Հայաստան շրջապտոյտը, ճոխ յայտագիր, շքեղ 4 աստղանի պանդոկ: Թռիչքը Հայլէյն Syrian Airlines-ով, օր մը ամբողջ Հայլէյի մէջ, պտոյտ եւ ճաշով, գին միայն՝ \$895 փոխան \$995:

\* Իր տեսակին մէջ եզակի եւ առաջին անգամ ըլլալով Լիբանանէ եւ Սուրիայէն Թարիզ-Նոր Ձուղա-Թաղէի վանքի 55-ամեակի ուխտագնացութիւն-շրջապտոյտը, ճոխ յայտագիր լման նախաճաշ, ճաշ, ընթրիքով, փոխան \$1250-ի միայն՝ \$895:

Հ.Մ.Մ.-ԱՆԹԻԼԻԱՍ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԴԻԿԱԼ

## ՄՏԵՐՄԻԿ ԵՐԵԿՈՅ

(Ընթրիք եւ Խաղեր)

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 23 Մայիս 2009, Երեկոյեան ժամը 8:30-էն սկսեալ Հ.Մ.Մ.-Անթիլիասի ակումբին մէջ: Հեռաձայն՝ 03-785756

## ՃԱՀԱՐԱՆ ՆԱՀՐ ԷԼ ՇԱՆՆԱ

(Տնօրէնութեամբ Յովհաննէս Փայասլեանի, նախկին սեփականատէր ճաշարան ԱՂԱ-ի)

\* Հէկոյ կահաւորում  
\* Մասնագիտացած անձնակազմ  
\* Համալսում եւ ճոխ արեւելեան ճաշացուցակ  
\* Ուսումնասիրուած սակագոյց  
\* Արաւի կը ներփակէ 350 անձ

Կը ստանձնենք միութեանական, ըստանկան եւ հարստանկան խրախճանքներ, յատուկ սակացոյցով: Հասցէ. Նահր Էլ Էլպի մուտքէն 2 թիլոմէթր ներս, հեռ. 04-930200 եւ 03-261275

## Կ՝ՈՒԶՈՒԻ

**Kodak** Հաստատութիւնը կարիքը ունի electronic ուսանած երիտասարդի մը: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 03-286678 թիւին կամ CV-ն ուղարկել հետեւեալ e-mail-ին: [kanekour@dm.net.lb](mailto:kanekour@dm.net.lb)

## ՇՆՈՐՀՎՈՐՈՒԹԻՒՆ

Ռըմէյի Ս. Յարութիւն եկեղեցոյ հոգեւոր հովիւը, թաղակալութիւնն ու տիկնանց յանձնախումբը, ինչպէս նաեւ Ազգ. Ռուբինեան-Ս. Մետրոպոլիտան տնօրէնութիւնը, հոգաբարձութիւնն ու ուսուցչական կազմը կը շնորհաւորեն տէր եւ տիկ. Գրիգոր Տէր Ստեփանեանը, իրենց որդւոյն՝ Կարօ Տէր Ստեփանեանի ընդ Նիսիին Նքուլայի նշանախօսութեան առիթով:

## ԳՐՎՈՒԿԾ ՕՐ

Հ.Մ.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ  
Հ.Մ.Մ. ՄԱՍԻՍ  
29 Մայիս 2009

## ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ

## ԳՐՎՈՒԿԾ ՕՐ

Հ.Մ.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ  
23 Մայիս 2009,  
ՄՏԵՐՄԻԿ ԵՐԵԿՈՅ

## BOGHOS OPTIC

Autoroute Jdeideh, Tel.:01-870016

## ՕՍԽՈՒ Է

Այնճարի մէջ ծախու է 4000 մ<sup>2</sup> տարածութեամբ հողաշերտ մը: Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել՝ 03-207772, 01-266514 թիւերուն:

## ՄԱԿԱՊՐԱՆ

	Գնման Սակ	Վաճառման Սակ
Սուրիական թղթոսկի	31,50	31,75
Զուլթեան տիկար	5145	5170
Յորդանանեան տիկար	2100	2125
Պահրէյնեան տիկար	3955	3980
Ա. Մ. Եմիրութեանց տիկար	407	409
Զաթարեան ռիալ	410	412
Սեւտական ռիալ	398	400
Օմանեան ռիալ	3865	3890
Եգիպտական կիւն	265	275
Անգլիական սթերլին	2265	2275
Չուիցերիական ֆրանք	1347	1357
Թրքական լիրա	945	955
Ճափոնական եէն	15,50	15,70
Ամերիկեան տոլար	1501	1514
Գաւառական տոլար	1268	1278
Աւստրալիական տոլար	1128	1138
Եւրօ	2030	2040
<b>ՈՍԿԻ</b>		
Մէկ օսս ոսկի	926	927
Մէկ օսս արծաթ	13,95	14,00
<b>Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.</b>		
Եւրօ	1,3600	1,3605
Գաւառական տոլար	1,1745	1,1750
Չուիցերիական ֆրանք	1,1055	1,1066
Ճափոնական եէն	95,65	95,70
Մէկ սթերլին	1,5180	1,5185
<b>Մէկ տոլար 373 դրամ (հայկական)</b>		
<b>Սակարանը տրամադրեց լուսնայփոխ</b>		
<b>Ալեքսանեան Եղբայրք Հեռ՝ 01-252852</b>		

## ARARAD DAILY NEWSPAPER

Tel. - Fax: 01-56 55 99  
P.O.Box: 175275 MAR MIKHAEL, BEIRUT - LEBANON  
Website: [www.araraddaily.org](http://www.araraddaily.org) e-mail: [ararad@terra.net.lb](mailto:ararad@terra.net.lb)

جريدة يومية سياسية أرمنية  
تصدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.م.)  
المدير المسؤول: ابيسوغوم كريشيكيان